

NGNGO
NEW GENERATION

ՀԵԿՈՒՅՑ

2023Թ. ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

REACT

Հայաստան, Երևան 2024թ.

REAct. 2023թ.-ԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Զեկույցը կազմվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից «Հանրային առողջության ալյանս»-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հիմնական բնակչության համար ծառայությունների կայունությունը» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի «Հանրային առողջության ալյանս»-ի տեսակետները:

Զեկույցը կազմեց **Շուշան Խնկոյանը**

Դիտարկեցին **Սերգեյ Գաբրիելյանը և Ալինա Միրզոյանը**

Ձևավորեց **Լևոն Չիլինգարյանը**

© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն
Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:
Բոլոր իրավունքները պահպանված են ©ՈՀՈՀՕ 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

04 ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

05 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

06 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

07 ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

08 ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

21 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

26 ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՆՍՀԿ	«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ԼԳԲՏ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
ԹՕ	Թմրամիջոց օգտագործող
ՏՍՏ	Տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդ
ՀՌՎ	Հակառետրովիրուսային
ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ	Անձի զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անձի հանդեպ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ	Անձի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան պահին վերագրված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անձի նույնականացմանը՝ որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր
ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆ	Անձ, որը զգացմունքային, հուզական, սեռական և այլ տեսակների գրավչությունների ամբողջություն է դրսևորում նույն սեռի անձանց նկատմամբ
ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ	Անձ, որի գենդերային ինքնությունը չի համընկնում ծննդյան պահին վերագրված սեռին
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Նույն կամ էականորեն նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունք՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքի
ՀՈՄՈՖՈԲԻԱ	Անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն հոմոսեքսուալ (նույնասեռական) անձանց նկատմամբ, կամ հակազդում հոմոսքեսուալ (նույնասեռական) անձանց վարքին և մշակույթին
ՏՐԱՆՍՖՈԲԻԱ	Անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն տրանս անձանց նկատմամբ, կամ հակազդում տրանս անձանց վարքին և մշակույթին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում:
Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:
ՆՍՀԿ-ի առաքելությունն է խթանել իրավահավասարություն և սոցիալական արդարություն՝ մարդու իրավունքների և շահերի պաշտպանության, առողջապահական ծառայությունների հասանելիության, կարողությունների զարգացման և մարդասիրական աջակցության միջոցով:

Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության ռազմավարական գործունեության շրջանակներում ՆՍՀԿ-ն պարբերաբար հրապարակում է զեկույցներ՝ խոցելի խմբերի, այդ թվում՝ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս (ԼԳԲՏ) անձանց նկատմամբ իրավախախտումների վերաբերյալ՝ բարձրաձայնելով առկա խնդիրները և օրենսդրական բացերը, ինչպես նաև իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծություններ, ներկայացնում առաջարկություններ՝ ուղղված հիմնախնդիրների կարգավորմանը և օրենսդրական բարեփոխումների իրականացմանը:

Այս ամենին զուգահեռ Կազմակերպությունը շարունակաբար մասնակցում է օրենսդրական նախագծերի քննարկումներին, հետևում օրենսդրական բարեփոխումների նախագծերին՝ ներկայացնելով իրավունքակենտրոն առաջարկներ:

ՆՍՀԿ-ն 2023թ-ից իրականացնում է «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հիմնական բնակչության համար ծառայությունների կայունությունը» ծրագիրը (Ծրագիր), որը ֆինանսավորվում է «Հանրային առողջության այլանսի» կողմից:

Սույն զեկույցում ներկայացված է 2023թ-ին արձանագրված իրավախախտումների դեպքերի մի քանիսի նկարագրությունները: Արձանագրված դեպքերի հիման վրա իրականացվել է վերլուծություն, վեր են հանվել օրենսդրական դաշտում առկա բացերը, ինչպես նաև գործնականում առկա խնդիրները: Վեր հանված խնդիրների հիման վրա զեկույցի վերջին բաժնում ներկայացված են համապատասխան առաջարկություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը կազմվել է REAct տվյալների բազայում ներմուծված իրավախախտումների դեպքերի ուսումնասիրության հիման վրա: REAct տվյալների բազայում ներմուծվել են տարեց մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ)-ով ապրող անձանց, տարեց ԼԳԲՏ, տարեց սեքս աշխատողների, երիտասարդ ԼԳԲՏ անձանց, երիտասարդ թմրամիջոց օգտագործողների (ԹՕ), միգրանտների, ՏՍՏ-ների, կանանց, աղջիկների, երիտասարդ տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց (ՏՍՏ), երիտասարդ սեքս աշխատողների, երիտասարդ ՄԻԱՎ-ով ապրող անձանց, տրանս*, քուիր բազմազան գենդերային ինքնություն ունեցող անձանց, ինչպես նաև այլ խոցելի խմբերի շրջանում մարդու իրավունքների իրավախախտումների դեպքերը, որոնք տեղի են ունեցել կամ շարունակվել են 2023թ.-ի ընթացքում:

REAct տվյալների բազայից առանձնացվել և զեկույցում ներկայացվել են իրավախախտման առավել հատկանշական դեպքերը: Ներկայացված է տարբեր ոլորտներում և տարբեր խմբերի շրջանում արձանագրված իրավախախտումներից առնվազն մեկական դեպք:
Հավաքագրված տեղեկատվությունը վերլուծվել է՝ ՀՀ օրենսդրության և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային իրավական ակտերին համապատասխան: ՀՀ ներպետական օրենսդրության մասին առավել լայն պատկերացում կազմելու համար՝ առանձնացված է բաժին, որտեղ նկարագրված է խտրականության վերաբերյալ ներպետական իրավական կարգավորումները:
Զեկույցը ամփոփվել է եզրակացությամբ և համապատասխան առաջարկություններով:

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ Սահմանադրությունը Հայաստանի իրավական համակարգի հիմքն է՝ երկրի հիմնական օրենքը, որին պետք է համապատասխանեն բոլոր օրենքներն ու իրավական ակտերը: Սահմանադրությամբ ամրագրված է, որ ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն է, և հռչակել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:

Հաշվի առնելով ՀՀ-ի անդամակցությունը միջազգային կառույցներին և տրամադրված հանձնարարականները՝ ՀՀ Սահմանադրության ընդունումից ի վեր՝ 1995թ.-ից փոփոխությունների 3 նախագիծ է մշակվել, որոնցից երկուսը ընդունվել են: Այդ փոփոխությունները որակվել են՝ որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների համապատասխանեցում ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին: Սակայն կատարված փոփոխությունները այնքան էլ չեն հարմարեցվել միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ Սահմանադրությամբ նախատեսված է Խտրականության արգելքը (հոդված 29), սակայն պաշտպանող հատկանիշների մեջ որպես հիմք ներառված չեն սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, իսկ միջազգային կառույցների կողմից տրամադրված հանձնարարականների համաձայն՝ խտրականության պաշտպանության հիմքերի շարքում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը պետք է ուղղակիորեն նշված լինեն:
Դեռևս 2018թ.-ից շրջանառության մեջ է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ իբրև խտրականության վերաբերյալ համապարփակ օրենսդրություն, որը մինչև օրս չի ընդունվել, և փաստացի ոլորտը կարգավորող համապարփակ օրենսդրություն չկա: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նախագծում նույնպես ՍԿԳԻ-ն ներառված չէ՝ որպես պաշտպանված հիմք:

Խտրականության վերաբերյալ փոփոխություններ կատարվեցին 2022թ.-ին, երբ ուժի մեջ մտավ ՀՀ նոր քերական օրենսգիրքը, որով այն քրեականացվեց (հոդված 203):
Նոր օրենսգրքով նաև փոփոխություններ եղան ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կարգավորումներում, մասնավորապես՝ ապաքրեականացվեց [1] այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելու մասը[2]:
Ի տարբերություն ԼԳԲՏ անձանց՝ ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձանց մասով կան հստակ ամրագրված օրենդրական երաշխիքներ: Մասնավորապես՝ «Մարդու իմունային անվաբարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքով ամրագրված է, որ անձի՝ ՄԻԱՎ-ով վարակված լինելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման համար՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի[3]:
Օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես՝ քրեական նոր օրենսգրքի ընդունումը, չնայած առկա բացերին, որոշակի դրական քայլեր են, սակայն այդ փոփոխությունները չեն կարող արդյունավետ լինել, եթե գործնականում չկիրառվեն:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=189521 , հոդված 177
[2] https://www.arlis.am/documentview.aspx?docID=110893 , հոդված 123
[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=52278 , հոված 6

ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵՊՔ 1

Նկարագրություն

2023թ-ի հունվարի 2-ի գիշերը ՏՍՏ անձանց մի խումբ կանգնած է եղել ՏՍՏ անձանց հավաքատեղիում:
Գիշերը՝ մոտավորապես 02:40-ի սահմաններում, հանկարծակի ժամանել են ոստիկաական մեքենաներ, և մեքենաներից դուրս են եկել 2 ոստիկաններ, որոնք միանգամից բռնել են Ա.Ե.-ին: Տեսնելով, որ հավաքված ՏՍՏ անձանցից շատերը հասցրել են փախչել տարբեր ուղղություններով, ոստիկանները հետևել են նրանց և կանգնեցրել ևս երկու ՏՍՏ անձի:
Փողոցում՝ ոստիկաական մեքենայի մոտ, ոստիկանները երեք տղաներից պահանջել են դատարկել գրպանները, պայուսակները, ապա նրանց տարել են ոստիկանության բաժին:
Կենտրոնի ոստիկանության բաժնում նրանց պահել են 40 րոպե: Այն բանից հետո, երբ այդ երեք տղաները պատասխանել են ոստիկանների հարցերին, թե ինչ էին անում այդ ուշ ժամին, տեղյա՞կ են արդյոք, որ այդտեղ հավաքվում են ՏՍՏ-ները, և արդյոք թմրանյութ օգտագործու՞մ են, թե՞ ոչ: Այնուհետև, ոստիկանները համոզվելով, որ այդ երեք տղաների մոտ արգելված որևէ նյութ չկա՝ ծակող առարկաներ, թմրամիջոցներ, ասել են, թե հարևան մուտքի բնակիչների կողմից բողոք է եղել աղմուկի վերաբերյալ:
Երեք տղաներին բաց են թողել՝ խորհուրդ տալով այլևս չհայտնվել այդ վայրում, և ավելացրել են, որ նրանք պետք է սկսեն «սիրել» աղջիկներին:

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք, կամայական ձերբակալությունից/կալանքից զերծ մնալու իրավունք:

Խտրականության հիմքը

Սեռական կողմնորոշում:

Գործի ընթացքը

Տուժողները ոստիկանների դեմ բողոք չեն ներկայացրել: Զրույցել են բաժնի ղեկավարի հետ, ով վստահեցրել է, որ նման բան այլևս չի կրկվնի, և որ բաժնի ղեկավարը անձամբ կխոսի ոստիկանների հետ:

ԴԵՊՔ 2

Նկարագրություն

Տուժողը նույնասեռական անձ է և համացանցով ծանոթացել է մի տղայի հետ, ում պատասխան ուղարկել է իր ինտիմ բնույթի լուսանկարները: 2023թ-ի հունվարի 19-ին այդ տղան տուժողին սկսել է սպառնալ՝ ասելով, որ նա այդ լուսանկարները կուղարկի տուժողի ծնողներին, եթե իրեն մինչև օրվա վերջ չտա 100.000 դրամ: Տուժողը նրան ուղարկել է պահանջված գումարը, սակայն սպառնացողը երկու օր անց նորից է պահանջել 100.000 դրամ:

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք, պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք, օրենքի առջև հավասարության և պաշտպանության իրավունք, անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք:

Խտրականության հիմքը

Սեռական կողմնորոշում:

Գործի ընթացքը

Ռեակտորի աջակցության շնորհիվ՝ անձը ինքնասպանություն չի գործել:
Ոստիկանության բաժնում հաղորդում է ներկայացվել:

Տուժողը այդ չափի գումար չի ունեցել: Դրանից հետո սպառնացողը տուժողի հորը նամակ է ուղարկել և հայտնել, որ իր տղան նույնասեռական է, և եթե մինչև հաջորդ օրվա ավարտը նրան 200.000 դրամ չկան, ապա տղայի բնույթի լուսանկարները կտեղադրի համացանցում: Այդ ամենի հետևանքով տուժողի հայրը որդուն ծեծի է ենթարկել և ասել, որ նրան նույնասեռական տղա պետք չէ: Այդ ժամանակ տուժողը, խորը անհանգստության մեջ, որոշել է ինքնասպանություն գործել, ուստի շարժվել է դեպի կամուրջը:	Սկզբում ոստիկանները չեն ցանկացել հաղորդումն ընդունել՝ ասելով քանի դեռ տեսանյութը չի հրապարակվել, պետք է երջանիկ լինել և շարունակել վայելել կյանքը: Միայն թեժ գիծ զանգահարելուց հետո են ոստիկանները հաղորդումը ընդունել: Մի քանի օր անց հանցագործը հայտնաբերվել է և նրա հետ պրոֆիլակտիկ բնույթի զրույց է անցկացվել: Արդյունքում, հանցագործն այլևս չի անհանգստացնում տուժողին, և վերջինս հաշտվել է ընտանիքի հետ՝ ճևացնելով, թե այդ ամենը սուտ է եղել:

ԴԵՊՔ 3

Նկարագրություն

2023թ.-ի մարտի 4-ին Երևան քաղաքի Խանջյան փողոցում դանակի 10 հարվածի հետևանքով սպանվել է տրանս անձ, ով սեռական ծառայություն մատուցող է եղել: Նրան սպանել են երկու երկվորյակ եղբայրներ, որոնք հաճախ էին այցելում այն վայրը, որտեղ հավաքվում են տրանս սեքս աշխատողները: Հանցագործները ալկոհոլի ազդեցության տակ մոտեցել են տրանս անձին, հայհոյել և ծեծել են, որից հետո եղբայրներից մեկը գրպանից հանել է դանակը և 10 անգամ հարվածել նրան: Ըստ ստացված տեղեկությունների՝ այդ եղբայրները առաջին անգամը չէ, որ տրանս անձին ծեծի են ենթարկել:
Դեպքից հետո համացանցում բազմաթիվ նյութեր են տեղադրվել, սակայն ոչ մի նյութում չի նշվել, որ սպանվածը տրանսգենդեր կին է[4]:

Իրավունքի խախտման տեսակը

Կյանքի իրավունք:

Խտրականության հիմքը

Գենդերային ինքնություն:

Գործի ընթացքը

Տուժողը մահացել է:
Ոստիկանությունը ճերբակալել է հանցագործին:
Նախաձեռնվել է քրեական վարույթ, որը շարունակվում է:

ԴԵՊՔ 4

Նկարագրություն

ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող տղան բնակարան է վարձել Վանաձոր քաղաքում: Վարձատուի հետ հարաբերությունները շատ ջերմ են եղել: 2023թ.-ի մարտի 10-ին վարձատուն, առանց նախապես զգուշացնելու, այցելել է բնակարան, և առանց որևէ բացատրության՝ պահանջել տղայից լքել բնակարանը:
Տղան պնդել է հայտնել իրեն, թե ինչ է կատարվում և

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք, ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք:

[4]https://www.police.am/news/view/%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6060323_01.html?fbclid=IwAR1Z_kyBKYxNp5CqlC5MdRSP05id4IJj4jwE4Hzz2ru5YIp3BtYqw34P5eY

ինչու է տանտերը այդպես վատ վարվում իր հետ, քանի որ նախկինում ամեն ինչ լավ է եղել: Սեփականատերը վերցրել է տղայի դեղատուփը, որը սեղանի վրա է դրված եղել, և նրան դա ցույց տալով՝ ասել, թե գիտեր, որ նրա հետ մի բան այն չէ: Հետո ավելացրել է, որ տղան «սպիդովկա» է, և իրեն այդ մասին չի տեղեկացրել: Տղան ստիպված է եղել հավաքել իրերը և ազատել տունը՝ գնալով ընկերներից մեկի տուն:
Հետո պարզվել է, որ Վանաձորում իրեն բուժօգնություն տրամադրող բժիշկներից մեկը մտերիմ է եղել բնակարանի տիրոջ հետ, և երբ իմացել է, թե ով է նրա տան վարձակալը, այդ մասին հայտնել է տանտիրոջը՝ և ասելով, որ իր բնակարանը սխալ մարդու է վստահել:

Խտրականության հիմքը

ՄԻԿՎ դրական կարգավիճակ:

Գործի ընթացքը

Դեպքի մասին հայտնի է դարձել մի քանի ամիս անց: Տուժողը չի ցանկացել գործին ընթացք տալ, քանի որ չի ցանկացել հիշել կատարվածը, չի հավատում գործի դրական ելքին:

ԴԵՊՔ 5

Նկարագրություն

Ս.-ն 19 տարեկան է, և շուրջ երկու տարի իր ընտանիքում ենթարկվել է բռնության՝ հոգեբանական և ֆիզիկական: Հայրը մշտապես Ս.-ին վիրավորել է և հոգեբանորեն ճնշում գործադրել՝ հայհոյել, ասել, որ նա ուղղակի իրենց խայտառակությունն է և ամաչում են, որ «նման» աղջիկ ունեն: Այդ ամենը հետագայում վերածվել է ֆիզիկական բռնության՝ ծեծ: Տարիներ շարունակ այդ իրավիճակը հանդուրժելուց հետո Ս.-ն 2023թ.-ի փետրվար ամսին փախել է տանից և բնակություն հաստատել իր տատիկի տանը: Ընտանիքի անդամները՝ հայրը, մայրը և եղբայրը, պարբերաբար փորձել են նրա հետ զրուցել և տանել տուն, սակայն չի ստացվել: Ս.-ի եղբայրը 2023թ.-ի մարտի 15-ի առավոտյան Ս.-ին, ֆիզիկական ուժ կիրառելով, տարել է տուն, որտեղ վերջինիս փակի տակ են պահել, վերցրել նրա հեռախոսը և ընկերները չեն կարողացել կապ հաստատել նրա հետ: Դեպքի մասին հայտնել է Ս.-ի ընկերուհին՝ Ա.-ն:

Իրավունքի խախտման տեսակը

Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք, խտրականությունից զերծ մնալու իրավունք, պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք, ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք:

Խտրականության հիմքը

Սեռական կողմնորոշում, սեռ:

Գործի ընթացքը

Ս.-ի ընկերուհին՝ Ա.-ն ուղղորդվել է ՆՍՀԿ՝ իրավաբանական խորհրդատվություն ստանալու: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ եթե ընկերուհին մեկ օրվա ընթացքում չկարողանա կապ հաստատել Ա.-ի հետ, ապա վերջինս կդիմի ոստիկանություն:
Որոշ ժամանակ անց տուժողին հաջողվել է փախչել տնից և գտնվել ապահով վայրում: Տուժողը չի ցանկացել բողոք ներկայացնել, քանի որ տնից դուրս գալուց հետո կարողացել է օգտվել ազատ տեղաշարժվելու իր իրավունքից և զերծ է եղել բռնությունից:

ԴԵՊՔ 6

Նկարագրություն

Լ.-ն բնակվել է վարձով բնակարանում, որի պայմանագիրը ի սկզբանե կնքվել է 1 տարի ժամկետով, և վերջնաժամկետը սեպտեմբեր ամսին էր:

Լ-ն տրանս անձ է, սակայն այդ մասին բնակարանի սեփականատերը չի իմացել: 2023թ.-ի մայիսի 24-ին բնակարանի սեփականատերը առանց Լ.-ին տեղեկացնելու այցելել է բնակարան՝ հետագայում հիմնավորելով, թէ ըստ պայմանագրի՝ իրավունք ունի ցանկացած ժամանակ գալ և ստուգել բնակարանի վիճակը: Լ.-ն այցի պահին հագուստափոխ վիճակում է եղել, և վարձատուն, տեսնելով դա, աղմուկ է բարձրացրել, պահանջել Լ.-ից լքել բնակարանը: Լ.-ն հրաժարվել էհեռանալ՝ հիշեցնելով պայմանագրի մասին, սակայն բնակարանի սեփականատերը սպառնացել է դիմել ոստիկանություն և այդպես նրան հեռացնել տանից:

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք, անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք:

Խտրականության հիմքը

Գենդերային ինքնություն:

Գործի ընթացքը

Լ-.ն ուղղորդվել է ՆՍՀԿ: Իրավաբանական խորհրդատվության արդյունքում դիմողը շարունակել է բնակվել բնակարանում, և վարձատուն իրավական առումով չի կարողացել ստիպել անձին հեռանալ:

ԴԵՊՔ 7

Նկարագրություն

Դ.-ն հանդիսանում է թմրանութ օգտագործող անձ և մոտ յոթ տարի առաջ իր ընտանիքի հետ հայրենադարձվել է Հայաստան՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով: Դ.-ն սովորում է ծրագրավորում և ունի բարձր առաջադիմություն, ինչի արդյունքում անծանոթ անձինք հայտնում են (անհայտ է թե ինչպես), որ ցանկանում են համագործակցե նրա հետ: Դ.-ն համաձայնվել է համագործակցել՝ խնդրելով նշել, թե ինչ են ցանկանում: Հետագայում պարզվել է, որ առաջարկություն արած անձինք ազգային անվտանգության աշխատակիցներ են, և մոտ մեկ ու կես տարի անձի հետ հանդիպումներ են ունեցել, սակայն այդպես էլ հստակ չեն տեղեկացրել, թե ինչ են ուզում Դ.-ից: 2023թ.-ի հունիսի 7-ին այդ անձինք կրկին այդ անձինք զանգահարել են Դ.-ին և խնդրել հանդիպում, որից Դ.-ն չի հրաժարվել: Նույն օրը տեղի է ունեցել հանդիպումը և Դ.-ն նրանց հայտնել է, որ հրաժարվում է այլևս հանդիպել: Այդ անձինք Դ.-ին ասել են, որ իրենք տեղյակ են նրա թմրանյութ գործածելու մասին, և Դ.-ին իբրև սպառնալիք հասկացրել են, թե պետք է շատ զգույշ լինի, որպեսզի չբռնվի:

Իրավունքի խախտման տեսակը

Ստրկության չենթարկվելու իրավունք, անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք:

Խտրականության հիմքը

Թմրամիջոցների օգտագործում, սեռական կողմնորոշում:

Գործի ընթացքը

Դ.-ն չի ցանկացել գործին ընթացք տալ, քանի որ չի հավատում գործի դրական ելքին և չի ցանկանում

Դ.-Ն վախեցել է և այդ ամբողջի մասին պատմել հորը: Դ.-ի հայրը հանդիպել է այդ անձանց հետ: Վերջիններս հայտնել են Դ.-ի՝ թմրանյութեր օգտագործելու մասին, ինչպես նաև այն, որ Դ.-Ն ընկերություն է անում նույնասեռական տղաների հետ:	Ժամանակ և ջանք ծախսել իր իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:

ԴԵՊՔ 8

Նկարագրություն

Հունիսի 24-ին ոստիկանները խուզարկություն են իրականացրել Երևան քաղաքի Բան ակումբում և թմրանյութերի հետ կապված տարբեր մեղադրանքներով՝ բերման ենթարկել երեսունութ հոգու: Բերման ենթարկվածների թվում է եղել նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ելիզավետա Դանիլչևան: Մինչև հիմա նա պահվում է Աբովյան քրեակատարողական հիմնարկում: Դանիլչևան երեսունութ կալանավորներից միակն է, ում մեղադրանք է առաջադրվել, և գործն այժմ դատարանում է: Ելիզավետան Հայաստան է տեղափոխվել Ռուսաստանից և ամուսնացել Երևանում: Ամուսինները աշխատել են՝ որպես գրաֆիկ դիզայներներ: Ամուսինը՝ Մաքսիմենկոն, պատմել է, որ այդ օրը «Բան» ակումբ էին գնացել իրենց ընկերներից մեկի հարսանիքի խնջույքին: Ելիզավետան և մի քանի հոգի ակումբի սենյակներից մեկում սեղանի շուրջ նստած են եղել, երբ ոստիկանները ներխուժել են ակումբ: Սեղանի վրա դրված է եղել 1,47 գրամ փոշիանման զանգված պարունակող պոլիէթիլենային փաթեթ: Հետագայում փորձաքննությունը պարզել է, որ փաթեթում եղել է մեթամֆետամին տեսակի թմրանյութ: Ակումբից հայտնաբերվել է նաև որոշ քանակությամբ մարիխուանա: Ելիզավետայի ամուսինը պատմել է, որ իր կնոջը հարցաքննել են առանց փաստաբանի, պատշաճ չեն բացատրել նրա իրավունքները, հոգեբանական բռնության են ենթարկել: Կինը հնարավորություն չի ունեցել լիարժեք հասկանալու, թե ինչ է կատարվել: Ըստ կնոջ ամուսնու՝ ոստիկանները սուտ ցուցմունքներ են տվել ակումբում տեղի ունեցածի վերաբերյալ:

Սա ապացուցվել է ոստիկաններին ամրակցված սարքերի տեսաձայնագրություններով և թմրանյութեր իրացնելու մեղադրանքն ամբողջովին կառուցված է ոստիկանների սուտ ցուցմունքների վրա, որևէ ապացույց չկա:

Ամուսնու խոսքով՝ Ելիզավետան պատրաստ է ընդունել իր մոտ թմրանյութ պահելու մեղադրանքը, բայց շահադիտական նպատակով թմրանյութեր իրացնելու մեղադրանքը, ըստ նրա, ամբողջովին շինծու է:

Մաքսիմենկոն հայտնել է, որ չի հասկանում, թե ինչու են Ելիզավետայի համար, որպես խափանման միջոց, ընտրել ամենախիստ միջոցը՝ կալանքը, այն դեպքում, երբ կարող էին ընտրել ավելի մեղմ միջոց, օրինակ՝ տնային կալանք: Ըստ նրա՝ կալանքը, որպես խափանման միջոց, ընտրվել է այն պատճառով, որ նա Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է:

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք, կամայական ձերբակալությունից/կալանքից զերծ մնալու իրավունք:

Խտրականության հիմքը

Թմրամիջոցի օգտագործում:

Գործի ընթացքը

Տուժողն ունի անձնական իրավաբան և գործը գտնվում է ընթացքի մեջ:

ԴԵՊՔ 9

Նկարագրություն

2023թ-ի հունիսի 28-ին տուժողը իր ընկերուհիների հետ գնացել է հյուրանոց՝ սեռական ծառայություն մատուցելու համար: Դուրս գալուց հետո ոստիկանության աշխատակիցները կանգնեցրել են նրանց ավտոմեքենան և հայտնել, որ պետք է ստուգեն մեքենան և փաստաթղթերը:

Ոստիկանները, աղջիկների պահվածքից հասկանալով, որ նրանք զբաղվում են սեռական ծառայությունների մատուցմամբ, սկսել են ագրեսիվ վերաբերվել նրանց, բղավել և քաշքշել: Աղջիկներից մեկի հարցին, թե ինչու են այդպես վերաբերվում, ոստիկաններից մեկը պատասխանել է, որ նրանք դրան են արժանի:

Ծեծկռտուք է սկսվել, աղջիկները սկսել են վրդովվել, ինչի արդյունքում ոստիկանը հարվածել է աղջիկներից մեկին և գցել գետնին: Այդ ժամանակ նրանց է մոտեցել մեքենայի վարորդը՝ տեղեկանալու, թե ինչ է կատարվում: Ոստիկանը նրա աչքերին գազ է փչել, որը ժամանակավոր կուրացնում է: Բացի վարորդից՝ բոլոր աղջիկները ալկոհոլի ազդեցության տակ են եղել: Աղջիկներին կոպիտ ձևով տեղափոխել են ոստիկանության բաժին, ասել, որ նրանց պետք է զննեն վկաների ներկայությամբ, և ներս են բերել այլ ձերբակալված սեռական ծառայություն մատուցող անձանց: Ոստիկանները տուժողներին ասել են, որ մերկանան, սակայն աղջիկները նկատելով տեսախցիկները, հրաժարվել են: Երկար դիմակայությունից հետո վերջապես նրանց տեսախցիկներից հեռու են տարել: Տուժողներին շարունակել են ոստիկանությունում պահել 14 ժամ, որից հետո նոր բաց են թողել: Մինչ տուժողների հեռանալը, նրանց վրա հարձակված պարեկներից մեկն աղջիկներին ասել է, որ բոլորին պետք է դատել և մաքրել:

Իրավունքի խախտման տեսակը

Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք, խտրականությունից զերծ մնալու իրավունք, կամայական ձերբակալությունից/կալանքից զերծ մնալու իրավունք, օրենքի առջև հավասարության և պաշտպանության իրավունք :

Խտրականության հիմքը

Սեռական ծառայությունների մատուցում:

Գործի ընթացքը

Տուժողները բողոք են ներկայացրել պարեկային ծառայության աշխատակիցների դեմ: Գործը գտնվում է ընթացքի մեջ:

ԴԵՊՔ 10

Նկարագրություն

2023թ.-ի հուլիսի 5-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, ՆՍՀԿ առաջնորդ, տրանս կին ակտիվիստ Ն.Մ.-ն ՄԻԱԿ-ի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և թեստավորում իրականացնելու նպատակով գտնվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում:

Այդ ընթացքում նրան է մոտեցել է անծանոթ տղամարդ: Նկատելով ու ճանաչելով տրանս ակտիվիստին՝ տղամարդը վիրավորական

Իրավունքի խախտման տեսակը

Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք, խտրականությունից զերծ մնալու իրավունք:

Խտրականության հիմքը

Գենդերային ինքնությունը:

Գործի ընթացքը

արտահայտություններ է հնչեցրել, ինչպես նաև խոչընդոտել է իրականացնել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների մատուցումը(5): Այն բանից հետո, երբ անձինք ուշադրություն չեն դարձրել անծանոթին, և որոշել են հեռանալ թեստավորման վայրից, անծանոթը սկսել է հարվածել տրանս անձի մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Շահառուն, տեսնելով դա, փախել է թեստավորման վայրից՝ մենակ թողնելով տրանս կնոջը:	Տրանս կինը ահազանգել է ոստիկանություն, և դեպքի վայր ժամանած ոստիկանները անծանոթ անձին բերման են ենթարկել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ոստիկանության բաժին: Գործով նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: ՆՍՀԿ-ի կողմից անձին տրամադրվում է իրավական աջակցություն: Արդյունքում, հնարավոր է եղել արձանագրել հանցագործության կատարման փաստը և հասնել քրեական գործի հարուցման: Գործը ընթացքի մեջ է:

ԴԵՊՔ 11

Նկարագրություն

2023թ.-ի հուլիսի 6-ին Ռ.Ա.-ն (52 տարեկան է) զբոսնելիս է եղել Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի տարածքում և որոշել է ոտքով քայլել դեպի տուն: Երբ դուրս է եկել համալիրի տարածքից և շարժվել է Հրազդան մարզադաշտի ուղղությամբ, նրան է մոտեցել LADA մակնիշի ավտոմեքենա առանց պետհամարանիշի: Մեքենայից դուրս են եկել 2 տղաներ՝ մոտ 30-35 տարեկան, և կանգնեցրել են Ռ.Ա.-ին: Կանգնեցնողները եղել են քաղաքացիական հագուստով, նրանցից մեկը ցույց է տվել վկայականը և հայտնել, որ ոստիկանության կենտրոնական բաժնից է: Ռ.Ա.-ն չի հասցրել ուշադիր նայել վկայականի նշանին և խնդրել է, որ նորից ցույց տան: Խնդրանքին պատասխանել են, որ եթե չի հասցրել նայել նշանը, ապա թող դիմի ակնաբույժի: Նրանք հարցրել են Ռ.Ա-ի անունը, որտեղից է գալիս և ուր է գնում: Ռ.Ա.-ն պատասխանել է բոլոր հարցերին, ապա հարցրել, թե ինչ է կատարվում և ինչու են նրան կանգնեցրել: Այդ տղաներից մեկը պատասխանել է, որ հարցերը իրենք են տալիս և պահանջել է Ռ.Ա.-ից բացել պայուսակը, ինչպես նաև ցույց տալ գրպանների պարունակությունը: Ռ.Ա.-ն պահանջել է ցույց տալ համապատասխան որոշումը: Այդ տղաները ծիծաղել են և ասել, որ եթե Ռ.Ա.-ն ցույց չտա պայուսակի և գրպանների պարունակությունը, ապա նրանք կգնան բաժին, որտեղ նա ոչ միայն ցույց կտա պարունակությունը, այլ նաև «կերգի» իր կողմնորոշման մասին: Ռ.Ա.-ն հարցրել է, թե որտեղից են ենթադրել, իր սեռական կողմնորոշումը: Տղան, ի պատասխան, ասել է, որ նրա նմաններին տեսնում են հեռվից, և որ ոչ մի «նորմալ» տղա այդպիսի պատառոտված ջինսեր չի հագնի, վերջում էլ ավելացրել են թե Ռ.Ա.-ն «տիպիկ թմրամոլի դեմք» ունի:

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք, կամայական ձերբակալությունից/կալանքից զերծ մնալու իրավունք:

Խտրականության հիմքը

Սեռական կողմնորոշում, թմրամիջոցի օգտագործում:

Գործի ընթացքը

Դիմողը որևէ բողոք չի ներկայացրել, քանի որ չի վստահում իրավապահ մարմիններին, ինչպես նաև չի հավատում գործի դրական ելքին:

[5] https://ոցոցo.net/2023/07/07/tiraxavorvum-e-trans-aktivist-nskh-autrich/

ԴԵՊՔ 12

Նկարագրություն

Սեռական ծառայություն մատուցող կնոջ մշտական հաճախորդը նրան ամուսնության առաջարկություն է արել և խոստացել, որ աչք կփակի այն հանգամանքի վրա, որ նա սեռական ծառայությունների մատուցմամբ է զբաղվե,լ և նրա հետ սիրով կապրի: Ամուսնությունից մեկ ամիս անց տղան տուն է եկել և հայտնել, որ մեծ գումար է պարտք, և կինը նորից պետք է սկսի սեռական ծառայություններ մատուցել: Կինը մերժել է և հիշեցրել տղայի խոստումները: Ամուսինը բարկացել է և դաժան ծեծի ենթարկել կնոջը՝ կապտեցնելով ամբողջ մարմինը և կոտրելով ատամը:

1 շաբաթ անց ամուսինը ստեղծել է օնլայն էջ, կնոջ անունից հաճախորդների հետ պայմանավորվել և նրանց հրավիրել իրենց տուն, որից հետո կնոջը ստիպել է ծառայություն մատուցել:

Այդպիսով, նա 1 ամիս շարունակ ամեն օր կնոջը ծեծի է ենթարկել և ստիպել սեռական ծառայություններ մատուցել:

Իրավունքի խախտման տեսակը

Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք, խտրականությունից զերծ մնալու իրավունք, ստրկության չենթարկվելու իրավունք, խոշտանգումներից և անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու իրավունք:

Խտրականության հիմքը

Սեռական ծառայությունների մատուցում, սեռ:

Գործի ընթացքը

Կնոջ ընկերուհին, տեղեկանալով այդ ամենի մասին, 2023թ.-ի հուլիս ամսին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել: Արդունքում գործը փոխանցվել է դատարան:

ԴԵՊՔ 13

Նկարագրություն

2023թ.-ի օգոստոսի 2-ին Ա.Օ.-ն (43 տարեկան) դիմել է ՀՀ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն՝ ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտության համար, քանի որ անպաշտպան սեռական հարաբերություն է ունեցել մի տղամարդու հետ, և որոշել է հետազոտություն անցնել: Թեստ հանձնելուց հետո Ա.Օ.-ն տաքսի է պատվիրել Յանդեքս հավելվածով: Տաքսու վարորդը նրա ծանոթն է եղել, միասին աշխատում են Երևանի շուկաներից մեկում: Նրանք ամբողջ ճանապարհին զրուցել են, իսկ վերջում վարորդը հարցրել է, թե Ա.Օ.-ն էր անում այդ կենտրոնում: Վերջինս պատասխանել է, որ եկել է՝ հետազոտություն անցնելու իր հանգստության համար, և նույնը խորհուրդ է տվել վարորդին: Հաջորդ օրը առավոտյան Ա.Օ.-ն գնացել է աշխատանքի և զգացել, որ շուկայում բոլորը իրեն տարօրինակ կերպով են նայում: Ըստ Ա.Օ.-ի՝ նախկինում բոլորով ճաշել են, սուրճ խմել և թղթախաղ խաղացել, սակայն այդ օրվանից հետո բոլորը իրենից մեկուսացել են, խուսափել շփվել:

Այդ ամենը շարունակվել է մեկ շաբաթ և Ա.Օ.-ն որոշել է աշխատակիցներից մեկին, ում հետ ընկերություն է արել, հարցնել, թե ինչ է կատարվում: Աշխատակիցը ասել է, որ տաքսու վարորդը զանգահարել է մի քանի աշխատողների և ասել, թե Ա.Օ.-ն ՄԻԱՎ ունի, և

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք, պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք, անձնական

որ անձամբ է նրան տեսել, ՁԻԱՀ-ի կենտրոնից տարել տուն: Ահա այդ պատճառով են բոլոր աշխատողները նրանից խուսափում, քանի որ վախենում են վարակվել: Ա.Օ.-ն աշխատողին ասել է ճիշտը, որ նա հետազոտություն է անցել, որովհետև անպաշտպան սեռական հարաբերություն է ունեցել: Որոշ ժամանակ անց շուկայի աշխատողների վերաբերմունքը ավելի է վատացել, Ա.Օ.-ի կողքով անցնելիս բարձրաձայն վիրավորական խոսքեր են ասել (վարակիչ, սպիդովկա և այլն): Մի քանի տարեց կանայք նկատողություն են արել՝ ասելով, թե Ա.Օ.-ն պետք է ամաչի, որ այդ ախտորոշմամբ աշխատում է, դիպչում է իրերին և այդ «կեղտը» փոխանցում այլ անձանց:

կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք:

Խտրականության հիմքը

ՄԻԱՎ դրական կարգավիճակ:

Գործի ընթացքը

Ա.Օ.-ի հետազոտության արդյունքը բացասական է եղել, սակայն նա դադարել է գնալ աշխատանքի, քանի որ իրեն ոչ ոք չի հավատում, և ըստ անձի՝ աշխատանքի վայրում անկիրթ աշխատողներ են, ու նա չի կարող ոչ մեկին բացատրել, որ, եթե անգամ ունենա ՄԻԱՎ, ապա առօրյայում ոչ մեկին չի կարող վարակել:
Իր ապրանքները վաճառել է ցածր գնով և հեռացել շուկայից:

ԴԵՊՔ 14

Նկարագրություն

2022թ.-ի ամռանը Գյումրի քաղաքում մի խումբ անձինք դաժան ծեծի էին ենթարկել տրանս անձի: Ոստիկանությունը մեկ տարվա ընթացքում գործը չի բացահայտել՝ բացատրելով, թե փողոցի տեսախցիկները հանցագործների դեմքերը չեն ֆիքսել:

2023թ.-ի օգոստոսի 4-ի գիշերը նույն հարձակվողները նորից դաժան ծեծի են ենթարկել տուժողին: Վերջինս զբոսնելիս է եղել նույն վայրում, որտեղ նախորդ անգամ հարձակվել էին:
Ըստ տուժողի՝ այդ տղաները եղել են մեքենայի մեջ և իրեն տեսնելով միանգամից դուրս են եկե մեքենայից և հարձակվել: Ընել են նրան, գցել գետնին, ոտքերով հարվածել են որովայնին և գլխին, հետո ծիծաղել նրա վրա, որ բողոք է ներկայացրել ոստիկանություն: Ապա ծաղրանքով ասել են, որ իրենց չեն բռնել և չեն բռնի, քանի որ տրանս անձանց հետ այդպես է պետք վարվել: Նրանք հեռացել են միայն այն ժամանակ , երբ հոգնել են: Վերջում խորհուրդ են տվել այլևս այդ հատվածում չզբոսնել:

Իրավունքի խախտման տեսակը

Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք, խտրականությունից զերծ մնալու իրավունք, ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք:

Խտրականության հիմքը

Գենդերային ինքնություն:

Գործի ընթացքը

Հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ոստիկանություն:

ԴԵՊՔ 15

Նկարագրություն

Ռ.Օ.-ն սովորում էր Երևանի պետական համալսարանի երկրորդ կուրսում: Առաջին կուրսում նա շատ ընկերներ է ունեցել իր կուրսից: Ամառային արձակուրդների ժամանակ Ռ.Օ.-ն որոշել է գրանցվել նույնասեռական անձանց ծանոթությունների հավելվածում՝ զուգընկեր գտնելու նպատակով: Անձնական նամակագրությամբ ուղարկել է իր լուսանկարը, որտեղ երևացել է դեմքը: Քանի որ հավելվածում հնարավոր չէ էկրանակադր անել, ուստի հանգիստ ուղարկել է լուսանկար իր դեմքով: Սեպտեմբերի 1-ին, երբ գնացել է համալսարան, մոտեցել է համակուրսեցիներին և ձեռք մեկնել՝ բարևելու համար, սակայն ոչ ոք փոխադարձ չի պատասխանել, որից նա սկսել է նյարդայնանալ՝ չհասկանալով թե ինչ է կատարվում: Առաջին դասին, երբ դասախոսը բոլորին հարցրել է, թե ինչպես են անցկացրել արձակուրդները, համակուրսեցիներից մեկը պատասխանել է, որ բոլորի արձակուրդները լավ են անցել, բայց Ռ.Օ-ինը ամենալավն ու ամենաթեժն է եղել: Բոլորը ծիծաղել են, բայց Ռ.Օ.-ն կրկին չի հասկացել, թե ինչ է կատարվում: Ընդմիջմանը նա հարցրել է համակուսեցուն, որը տեղեկացրել է, թե բոլորը տեսել են նրա նկարը նույնասեռականների ծանոթության հավելվածում: Ռ.Օ.-ն պարզել է, որ իր որ համակուրսեցիներից մեկի ընկերը ևս գրանցված է այդ հավելվածում, և երբ նա ուղարկել է իր նկարը, այդ տղան այլ հեռախոսով նկարել է այն և ուղարկել ընկերոջը: Ռ.Օ.-ն գնացել է տուն՝ չիմանալով ինչ անել:

2023թ-ի սեպտեմբերի 7-ին Ռ.Օ.-ն իր մեջ ուժ է հավաքել և նորից գնացել համալսարան: Համալսարանում ամեն ինչ առաջվա պես է եղել՝ բոլորը նայել են նրան, շշնջացել և ծիծաղել: Ընդմիջմանը նրան է մոտեցել տղաներից մեկը և ասել, որ իրենց համար ամոթ է նրա հետ սովորել մի կուրսում, բոլոր «կապույտները» վարակիչ են, և նրան պետք է առանձնացնել նորմալ մարդկանցից: Ռ.Օ.-ն Ն ոչինչ չի պատասխանել և վերադարձել է տուն:

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունի պաշտպանվելու իրավունք, անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք:

Խտրականության հիմքը

Սեռական կողմնորոշում:

Գործի ընթացքը

Ռ.Օ.-ն հեռացել է համալսարանից:

ԴԵՊՔ 16

Նկարագրություն

Գ.Ա.-ն արդեն 4 տարի է ապրում է ՄԻԱՎ-ով և ըստ նրա խոսքերի՝ ժամանակին ընդունում է ՀՌՎ դեղերը: Հոկտեմբեր ամսին նա այցելել է Երևան քաղաքում գտնվող ատամնաբուժական կլինիկա: Մինչ հիվանդանոց այցելելը Գ.Ա.-ն ցանկացել է մի քանի իմպլանտներ տեղադրել, և գիտեր, որ այդ կլինիկան Երևան քաղաքում լավագույններից մեկն է Բժշկի հետ խորհրդատվությունը լավ է անցել և պայմանավորվել են հաջորդ այցի համար: Խորհրդատվությունից հետո Գ.Ա.-ի համար կլինիկայում անձնական թեթիկ է բացվել, որը նա լրացրել է:

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք, առողջության պահպանման և բժշկական օգնություն ստանալու իրավունք:

:Հարցաթերթիկում նշված է եղել ՄԻԱՎ վարակի առկայության մասին հարց, որին Գ.Ա.-ն պատասխանել է «Այո»:
Հաջորդ օրը Գ.Ա.-ն զանգ է ստացել կլինիկայից, և նրան հայտնել են, որ հրաժարվում են բուժել նրա ատամները, ավելի կոնկրետ՝ իմպլանտացիան: Զանգի ժամանակ նշել են, որ նրանք իմպլանտներ չեն տեղադրում «ՁԻԱՀ-ով հիվանդներին»:

Խտրականության հիմքը

ՄԻԱՎ դրական կարգավիճակ:

Գործի ընթացքը

Գ.Ա.-ն ուղղորդվել է ՆՍՀԿ: Կազմակերպությունը սկսել է զբաղվել գործով, սակայն հետագայում Գ.Ա.-ն հրաժարվել է ընթացք տալ, քանի որ չի հավատացել գործի դրական ելքին և չի ցանկացել ժամանակ ու ջանք ծախսել՝ իր իրավունքները պաշտպանելու համար:

ԴԵՊՔ 17

Նկարագրություն

2023թ.-ի հոկտեմբեր ամսին Ս.Ա.-ն, անձնագիրը փոխելու համար, դիմել է անձնագրային բաժին, որտեղ խնդրել են ներկայացնել զինվորական գրքույկ: Ս.Ա.-ն զինվորական ծառայություն չի անցել, քանի որ ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունի: Նա այդ մասին տեղեկացրել է անձնագրային բաժնի աշխատակցին, որից հետո աշխատակիցը գնացել է բաժնի պետի մոտ՝ ճշտելու, թե արդյոք կարող է Ս.Ա.-ից դիմում վերցնել:
Վերադառնալով աշխատակիցը հայտնել է, որ կարող են դիմում վերցնել, սակայն սկսվել է խտրական վերաբերմունք անձի նկատմամբ:
Աշխատակիցը Ս.Ա.-ից միանգամից չի վերցրել փաստաթղթերը, գնացել է ինչ-որ տեղ և վերադարձել ձեռնոցներով (դեղին գույնի, որոնք օգտագործում էին մաքրուհիները): ՍԱ.-ն ոչինչ չի ասել և փաստաթղթերը թողնելով՝ հեռացել է:

Իրավունքի խախտման տեսակը

Խտրականությունից զերծ մնալու իրավունք:

Խտրականության հիմքը

ՄԻԱՎ դրական կարգավիճակ:

Գործի ընթացքը

Ս.Ա.-ն ոստիկանություն հաղորդում է ներկայացրել: Այնուհետև, դեպրեսիվ վիճակում դիմել է աութրիչին, ով ուղղորդել է ՆՍՀԿ հոգեբանի և իրավաբանի մոտ: Ոստիկանությունում տրված հաղորդման հիման վրա քրեական գործ չի հարուցվել: Իրավաբանը բանավոր կապ է հաստատել անձնագրային բաժնի հետ և կարգավորել խնդիրը: Արդյունքում, անձը ստացել է անհրաժեշտ փաստաթղթերը:

ԴԵՊՔ 18

Նկարագրություն

Ֆաթիման Ինգուշեթիայից Հայաստան է տեղափոխվել «Մարեմ» Կազմակերպության օգնությամբ: Նա երկար տարիներ ընտանեկան բռնության է ենթարկվել մոր և եղբոր կողմից, հատկապես՝ եղբոր: 2023թ.-ին նոյեմբերին Ֆաթիման դիմել է «Մարեմ» կազմակերպությանը, որպեսզի իրեն օգնեն Ինգուշեթիայից տեղափոխվել Հայաստան: Հայաստան տեղափոխվելուց հետո մեկ շաբաթ անց նրան բերման են ենթարկել և տեղափոխել Երևան քաղաքի ոստիկանության բաժին: Բաժնում Ֆաթիմային սպասելիս է եղել իր հորեղբայրը: Նա սկսել է սպառնալ Ֆաթիմային, որ եթե չվերադառնա, նրան կձերբակալեն գողության կամ այլ հանցանքի համար: Ոստիկանության բաժնում Ֆաթիման խնդրել է, որ իր հարազատներին թույլ չտան իրեն տեսակցել, քանի որ չի ցանկանում նրանց տեսնել, սակայն բաժնում ոչ ոք նրան չի լսել: Ավելին, նրանից վերցրել են իր հեռախոսը, միացրել այլ հեռախոսի և այլն:

Իրավունքի խախտման տեսակը

Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք, կամայական ձերբակալությունից/կալանքից զերծ մնալու իրավունք, ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք:

Խտրականության հիմքը

Սեռ, ազգություն, էթնիկ պատկանելիություն կամ կրոն:

Գործի ընթացքը

Ֆաթիմային սկսել են օգնել տեղական կազմակերպություններ՝ տրամադրելով իրավաբաններ և ապաստարան: Ըստ Ֆաթիմայի՝ Հայաստանի պետական ապաստարանում հրաժարվել են նրան ընդունել: Նա օգնության խնդրանքով դիմել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ:
ՆՍՀԿ-ն նրան տրամադրել է ապաստան, սնունդ, հիգիենայի պարագաներ, հոգեբանական և իրավաբանական ծառայություններ:
ՆՍՀԿ-ն ոստիկանության բաժնում տեղի ունեցած իրադարձությունների մասով գործը փոխանցել է մեկ այլ կազմակերպության, որը տրամադրել է փաստաբան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի շրջանակներում 2023թ.-ի ընթացքում Հայաստանում արձանագրվել է իրավախախտումների 110 դեպք՝ փաստաթղթավորված REAct տվյալների բազայում.



Փաստաթղթավորված իրավախախտումները մեծամասամբ հիմնված են անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում վերլուծությունը ցույց է տալիս բազմակի խտրականության դեպքեր, որտեղ խտրականության հիմքը տուժողի սեռական կողմնորոշումն է և/կամ գենդերային ինքնությունը՝ կապված սեքս աշխատանքում ներգրավվելու հետ, իսկ որոշ դեպքերում՝ պայմանավորված ՄԻԱՎ դրական կարգավիճակով:

Արձանագրված դեպքերով հիմնականում խախտվել են անձանց հետևյալ իրավունքները՝

- Անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք
- Ստրկության չենթարկվելու իրավունք
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք
- Կյանքի իրավունք
- Կամայական ձերբակալությունից/կալանքից զերծ մնալու իրավունք
- Ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք
- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք
- Օրենքի առջև հավասարության և պաշտպանության իրավունք
- Խոշտանգումներից և անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու իրավունք
- Առողջության պահպանման և բժշկական օգնություն ստանալու իրավունք
- Պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք

Բոլոր իրավախախտումների հիմքում ընկած է խտրական վերաբերմունքը կապված անձի ենթադրյալ կամ իրական որևէ հատկանիշի հետ՝ սեռական կողմնորոշում և/կամ գենդերային ինքնություն, ՄԻԱՎ դրական կարգավիճակ, սեքս աշխատանքով զբաղվելը, թմրամիջոցի գործածումը և այլն: Որոշ դեպքերով խախտվել են անձանց մեկից ավելի իրավունքներ:

Իրավախախտումները կատարվել են հետևյալ անձանց կողմից .



Ինչպես արդեն երևում է վիճակագրությունից, մեծամասնություն են կազմում անծանոթների կողմից կատարված իրավախախտման դեպքերը: Այն ևս մեկ անգամ փաստում է ՀՀ-ում խոցելի խմբերի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի, խարանի և խտրականության բարձր ցուցանիշի մասին:

Հաջորդիվ հանցագործությունների դեպքերի բարձր ցուցանիշ է արձանագրվել սեքս աշխատանքով զբաղվող անձանց հաճախորդների կողմից: Սա ցույց է տալիս իրավական անհրաժեշտ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը ևս, քանի որ սեքս աշխատանքով զբաղվող անձինք չունեն իրավական պաշտպանվածություն, ավելին՝ սեքս աշխատանքով զբաղվելու համար ՀՀ օրենսդրությամբ վարչական պատասխանատվություն է նախատեսվում, և այդ պայմաններում անձինք չեն կարողանում դիմել իրավական պաշտպանության:

Իրավական պաշտպանության դիմելուց բացի՝ նաև նվազում է դիմելիությունը բժշկական հաստատություններ՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից խտրական դրսևորումների պատճառով: Արձանագրված դեպքերով վերջիններս խախտել են անձանց բժշկական գաղտնիքը և առողջական վիճակի մասին տեղեկատվությունը հայտնել այլ անձանց՝ ընտանիքի անդամ, վարձատու, հարևան և այլն, որի հետևանքով անձինք կրկնակի խտրականության են ենթարկվել: Իսկ որոշ դեպքերում հրաժարվել են բուժօգնություն տրամադրել անձին այն բանից հետո, երբ բացահայտվել է նրա ՄԻԱՎ դրական կարգավիճակը կամ սեռական կողմնորոշումը և այլն: Այս ամենը բացասաբար է անդրադառնում մի շարք հիվանդությունների կանխարգելման և բուժման համար:

Տուժողները մեծաասամբ չեն ցանկանում իրավախախտումների գործերով դիմել իրավական մարմիններին, քանի որ վերջիններիս կողմից առկա է կողմնակալ վերաբերմունք, տրանսֆոբիայի և հոմոֆոբիայի բարձր մակարդակ: Այդ և այլ պատճառներով անձինք մեծամասամբ չեն ցանկացել գործերին ընթացք տալ:



Փաստագրված որոշ դեպքերում հենց իրավապահ մարմինների կողմից են խախտվել անձանց իրավունքները, իսկ մնացած գործերով խախտվել են իրավական պաշտպանության դիմելու ընթացքում:

Դեպքերից 43-ով անձինք չեն ցանկացել դիմել իրավական պաշտպանության և գործին ընթացք տալ, քանի որ վախեցել են բացահայտել իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, անհանգստացել են իրենց կյանքի և անվտանգության համար, վախեցել կամ չեն վստահել իրավապահ մարմիններին նախկինում ունեցած վատ փորձի պատճառով:

Փաստացի, ՀՀ ոստիկանության համակարգը, որն օժտված է մարդու անվտանգության ապահովման, հանցագործությունների կանխման, բացահայտման և օրենքով սահմանված այլ լիազորություններով, վստահություն չունի խոցելի խմբերի շրջանում, ավելին համակարգում դրսևորվող կողմնակալ վերաբերմունքը և տրանսֆոբիայի ու հոմոֆոբիայի բարձր մակարդակը բացասաբար է անդրադառնում հանցագործությունների կանխարգելման և անձանց խախտված իրավունքների վերականգնման վրա:
Արդյունքում, խարանի, խտրականության, բռնության և/կամ խոշտանգման ենթարկված անձինք զրկվում են իրենց խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, որի հետևանքով հանցագործություն կատարած անձինք պատասխանատվության չեն ենթարկվում, ինչը ևս խթան է հանդիսանում նոր հացագործությունների համար:

Որոշ գործերով անձինք չեն ցանկացել բողոք ներկայացնել հանցագործների դեմ, քանի որ մեղավորները եղել են իրենց ծանոթները կամ հարազատները: Հիմնականում, նման իրավիճակները ընտանեկան բռնության գործերով են եղել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում ներառել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես խտրականության պաշտպանված հատկանիշ,

- Ընդունել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որում պաշտպանված հիմքերի ցանկում ներառված կլինեն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը,

- ՀՀ Քրեական օրենսգրքի 203-րդ, 329-րդ և 330-րդ հոդվածներում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը համապատասխանաբար ներառել որպես խտրականության պաշտպանված հատկանիշ, ատելության հրապարակային հայտարարության և բռնություն գործադրելու հրապարակային կոչի, սպառնալիքի շարժառիթ,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածում ներառել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես խտրականության պաշտպանված հատկանիշ,

- Ապավարչականացնել սեռական ծառայություն մատուցումը և համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ վարչական և քրեական օրենսգրքերում,

- Իրականացնել իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված դասընթացներ, հատկապես ոստիկանության, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության ծառայության, պաշտպանության նախարարության և պետական այլ կառույցների աշխատակիցների շրջանում:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-Ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում:
ՀԿ-Ն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:

Հայաստան, Երևան 2023թ.

contact@ngngo.net
www.ngngo.net

+374 60478989
+374 55478980

© 2024. Published by New Generation Humanitarian NGO
© 2024. Designed by New Generation Humanitarian NGO